26.176
05 JAN 2010

«ԿՈԼԽՈԶՆԻԿԻ ՀԱՎԵԼՎԱԾ» № 8

334.6
Ա-63

# ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱԹՆ-ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ

(Համամիութենական կոլտնտեսկենտրոնի յեվ կաթկոլտնտեսկենտրոնի վորոշումը)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ-Ի ԿՈԼՏՆՏԵՍԿԵՆՏՐՈՆԻ

1931—ՅԵՐԵՎԱՆ

19 FEB 2013

26.176

Պետհրատի տպարան
Գլավլիտ 6925 (բ)
Պատվեր 5474
Տիրաժ 1500

334.6
12-63
1007
33649

# ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱԹՆ—ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ

(Համամիութենական կոլտնտկենտրոնի և կաթ-կոլտնտկենտրոնի վորոշումը)

Կաթնապրանքային ֆերմաների կազմակերպման գործում ամենագլխավոր թերություններն այն են, վոր չի կիրառվում աշխատանքի գործավարձային ձևը, հաշվի յեն առնվում կատարված աշխատանքի վոչ թե քանակն ու վորակը, այլ միայն դրա համար գործադրված ժամանակը. հաճախակի փոփոխվում են աշխատավորները, գոյություն ունի դիմազրկություն: Այս բոլորի արդյունքը լինում է այն, վոր կոլտնտեսականները շահագրգռված չեն լինում բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունն ու վորակը, վորի հետևանքով խոշոր չափով չի բարձրանում արտադրանքի քանակը, քանի գնում ցածրանում է կաթի քանակը, մեծանում է սատկող հորթերի տոկոսը և տեղի յեն ունենում այլ բացասական յերևույթներ:

Այս թերությունները վերացնելու նպատակով՝ կոլտնտկենտրոնի և Կաթկոլտնտկենտրոնի վարչությունները առաջարկում են կաթնապրանքա-

յին ֆերմաների (ԿԱՖ) բոլոր վարիչներին, կոլխոզների և կոլխոզմիությունների վարչություններին, ձեռք առնել հետևյալ միջոցները՝

1. Կաթնաապրանքային ֆերմաների տարեկան ծրագրի հիման վրա կազմում են օրացուցային պլանները յուրաքանչյուր սեզոնի (արոտային և մսուրային պահվածքի) համար առանձին: Օրացուցային պլաններում պետք է սահմանված լինեն յուրաքանչյուր բրիգադին, խմբին և կոլտնտեսականին տրվելիք արտադրական առաջադրանքը, նրա իրագործման կարգը և գնահատումը աշխօրերով:

2. ԿԱՖ-երին սպասարկելու համար կոլխոզի վարչությունը տրամադրում է անհրաժեշտ քանակի կոլտնտեսականներ և կոլտնտեսուհիներ և առաջին հերթին նրանց, վորոնք այդ գործում փորձառություն ունեն:

3. ԿԱՖ-երին սպասարկելու համար նշանակված կոլտնտեսականներն աշխատում են նրա վարիչի ղեկավարությամբ՝ առանձին բրիգադներ կազմելով:

4. Եթե անասունների քանակը ԿԱՖ-ում հասնում է 150—160 գլխի, նրանց սպասարկելու համար կազմվում է մեկ բրիգադ՝ բաղկացած 15-18 հոգուց: Իսկ յերբ անասունների քանակը անցնում է 300 գլխից, կազմակերպվում են յերկու և



ավելի բրիգադներ: Խորհուրդ է տրվում ձմրան սեզոնին (մսուրային պահվածքի շրջանում) բրիգադներ կազմակերպել ըստ գոմերի, իսկ ամրան սեզոնին՝ (արոտային պահվածքի շրջանում) ըստ նախիրների (կովերի, յերինջների, հորթերի, ցուլերի և այլն):

5. Յուրաքանչյուր բրիգադի կազմը պետք է անփոփոխ մնա ամբողջ տարվա ընթացքում: ԿԱՖ-ում աշխատող կոլխոզնիկներին այլ աշխատանքի տեղափոխել թույլ է տրվում միայն այն դեպքում, յերբ անհրաժեշտ է կրճատել անասնապահական բրիգադի անդամների թիվը (յերբ մսուրային պահվածքից անցնում են արոտային պահվածքին և այլ դեպքերում):

6. Բրիգադը բաժանվում է խմբերի՝ համաձայն նրանց տրված արտադրական առաջադրանքների, այն է— առաջին խումբ՝ հորթապահներ, 2-րդ խումբ՝ ուրբահ անասուններին խնամողներ, 3-րդ խումբ՝ կթողներ և կթու անասուններին խնամողներ:

Յուրաքանչյուր խմբում ամեն մի կթողի կամ տավարապահի ամրացնում են վորոշ քանակով անասուններ, վորոնց դրության համար նրանք անձնապես պատասխանատու յեն:

Բարեխիղճ կթող-կոլտնտեսուհիներին և անասուններին լավ խնամող տավարապահներին

ամրացնում են ֆերմայի ամենալավ և թանկարժեք անասունները։ Անասունները ըստ խմբերի բաժանելու և նրանց այս կամ այն կոլտնտեսականին ամրացնելու ժամանակ պետք է նկատի ունենալ կովերի որակը և ցեղը։

7. 150—160 գլուխ անասուն ունեցող ֆերմաներում վարիչը միաժամանակ կատարում է բրիգադիրի բոլոր պարտականությունները, իսկ խոշոր ԿԱՖ-ում, որտեղ աշխատում են մի քանի առանձին բրիգադներ, բրիգադիրներին, որոնք հանդիսանում են ավագ անասնապահներ կամ ավագ կթողներ, նշանակում է ֆերմայի վարիչը այն ամենափորձված և ակտիվ կոլտնտեսականներից, որոնք առաջավորներ են հանդիսանում աշխատանքի սոցիալիստական ձևերի (սոցմրցման ու հարվածայնության) կիրառման գործում։

Այն ֆերմայում, որտեղ անասունների քանակը չի պահանջում ունենալ հատուկ բրիգադիր (ավագ անասնապահ կամ ավագ կթող), կարելի է շարքային անասնապահներից կամ կթողներից մեկին նշանակել որպես ավագ, որը միաժամանակ մյուս կոլխոզնիկների հետ պետք է կատարի իր սովորական աշխատանքը։

8. Բրիգադիրը (ավագ անասնապահը կամ կթողը) անձամբ պատասխանատու է ամբողջ բրիգադի և առանձին կոլտնտեսականների աշ-



խատանքի ճիշտ օգտագործման, նախրի դրության, պլանի իրագործման, արտադրանքի ելույթի քանակի և որակի և գույքի պահպանության համար։ Բրիգադիրը ԿԱՖ-ում արտադրական առաջադրանքն ստանում է ֆերմայի վարիչից, ղեկավարում և միաժամանակ հսկում է բրիգադի ամբողջ աշխատանքի վրա, հետևում է, որպեսզի ճիշտ կատարվեն բանվորական օրվա համար սահմանված կարգադրությունները և ֆերմայի վարիչի, զոոտեխնիկի ու անասնաբուժի առանձին ցուցմունքները, տույժ է նշանակում իր բրիգադի անկարգապահ կոլտնտեսականների վրա, գնահատում և հաշվի է առնում կատարված աշխատանքի քանակը և որակը աշխօրերով և գրանցում է աշխօրերը կոլտնտեսականների աշխգրքույկներում, կազմակերպում է արտադրանքի հաշվառումը։ Բրիգադիրը ղեկավարում է բրիգադի խորհրդակցությունները և այդ խորհրդակցության միջոցով իր բրիգադի անդամների ստեղծագործական նախաձեռնությունն ու աշխատանքային վերելքը կազմակերպում և ուղղում դեպի սոցմրցում ու հարվածայնություն, ինչպես նաև պատասխանատու է արտադրական խորհրդակցության որոշումների կյանքում իրագործելու համար։

9. Ֆերմայի վարիչը ստանում է կոլխոզի վարչությունից առաջադրանք ամբողջ տարվա հա-

մար։ Իսկ ինքն իր հերթին բրիգադին արտադրական առաջադրանք է տալիս ըստ սեզոնների և ամիսների։

10. Բրիգադն իր աշխատանքները կատարում է համաձայն սահմանված ներքին կանոնների։ Ֆերմայի վարիչը աշխատակիցներից յուրաքանչյուր խմբին՝ անասնապահներին, հորթապահներին, կթողներին և այլն՝ սահմանում ու տալիս է իրենց պարտականությունների ցուցակը։

## ԳՈՐԾԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

1. ԿԱՖ-ում բոլոր աշխատանքներն առանց բացառության պետք է կազմակերպված լինեն գործավարձային սիստեմով։

2. Աշխատանքի գնահատումը աշխօրերի հաշվումները կատարվում են արտադրանքի միավորների քանակի համեմատ, այն է՝

ա) կթու կովերին պահող կամ խնամող անասնապահների, կթողների և նախրապահների աշխօրերը հաշվել նույն կովերից ստացված կաթի յուրաքանչյուր ցենտների համեմատ։

բ) հորթ պահողների աշխօրերը հաշվել նրանց ամրացված յուրաքանչյուր խումբ հորթերի կենդանի քաշի մեկ ցենտներ աճքի համեմատ։

գ) մատղաշներին կամ բտվող անասուններին պահող տավարապահի, նախրապահի աշխօրերը հաշվել նրանց ամրացված անասունների ամեն մի



խմբի կենդանի քաշի մեկ ցենտներ աճման համեմատ։

3. Յուրաքանչյուր ֆերմա պետք է մշակած ունենա աշխատանքի գործավարձային գնահատման տախտակ՝ ըստ արտադրանքի միավորի՝ յուրաքանչյուր տեսակի աշխատանքի (կթելու, արածացնելու և այլն) և տարբեր սեզոնների (արոտային, մսուրային) համար առանձին։ Գնահատման այդ տախտակից պետք է իր մոտ ունենա ԿԱՖ-ում աշխատող ամեն մի կոլտնտեսական, ինչպես նաև պետք է կախված լինի աչքի ընկնող տեղում։

4. Կաթնատու նախիրին սպասարկող կոլտնտեսականների համար արտադրանքի յուրաքանչյուր միավորի գործավարձային գնահատումը աշխօրերով կատարվում է, օրինակ, այսպես՝ կոլտնտեսությունն 180 օր տևող արոտի սեզոնի համար սահմանել է աշխատանքի բեռնավորման հետևյալ նորմաները և արտադրական առաջադրանքները.

ա) բեռնավորման նորման է՝ անասնապահի համար 90 գլուխ, կթողի համար՝ 105 լիտր կաթ, կամ 15 գլուխ կով (միջին կիթը մեկ կովից հաշվելով 7 լիտր), նախրապահի համար՝ 65 գլուխ։

բ) արտադրական առաջադրանք՝ արոտի ամբողջ սեզոնում՝ ըստ կաթի քանակի սահմանված է՝ անասնապահին, վորը սպասարկում է 50 կով-

625 ցենտներ կաթ, կթողին, որին ամրացված է 15 կով—188 ցենտներ կաթ, նախրապահին՝ 65—15 կով—188 ցենտներ կաթ, նախրապահին՝ 65 կովով— 813 ցենտներ կաթ:

Յուրաքանչյուր անասնապահին 625 ցենտներ կաթի համար, որ տալու յեն նրա պահած կովերը, հաշվելու յեն 231 աշխօր, կամ մեկ ցենտներ կաթին՝ 37 հարյուրերորդական (0,37) աշխօր:

Յուրաքանչյուր կթողին (արոտային շրջանում) 188 ցենտներ կաթի համար 233 աշխօր կամ մեկ ցենտներին՝ 1,24 աշխօր:

Նախրապահին՝ ամբողջ արոտային շրջանում նրա պահած 65 կովից ստացված 813 ցենտներ կաթի համար կհաշվվի 252 աշխօր կամ մեկ ցենտներին 0,31 աշխօր: Յեթե նախրապահի պահած 65 կովը օրական տալիս են 4,5 ցենտներ կաթ, նրան կհաշվեն մեկ ամբողջ, քառասուն հարյուրերորդական (1,40) աշխօր, տավարապահին՝ յեթե իր պահած 50 կովից ստացվում է օրական 3,5 ցենտներ կաթ, կհաշվեն 1,30 (մեկ ամբողջ 30 հարյուրյերորդական աշխօր): Կթողին՝ յեթե օրական կթում է մեկ ցենտներ 5 կիլոգրամ կաթ, կհաշվեն 1,30 (մեկ ամբողջ 30 հարյուրերորդական աշխօր):

5. Հորթերին խնամող կոլտնտեսականների աշխատանքի գործավարձային գնահատումը աշխա-



բերով ստացվում են կենդանի քաշի մեկ ցենտների աճքի հաշվով: Այդ գնահատումը կատարելիս անհրաժեշտ է նկատի ունենալ յուրաքանչյուր կոլտնտեսականի բեռնավորման չափը և վորոշ ժամանակաշրջանի համար նրան տրված արտադրական առաջադրանքը: Մեկ կոլխոզնիկի՝ կաթնային շրջանի 30 գլուխ հորթ 100 օր պահելու և 18 ցենտներ կենդանի քաշի ավելացում տալու համար հաշվում են՝ 130 աշխօր կամ կենդանի քաշի մեկ ցենտներ աճման համար 7,22 (7 ամբողջ, 22 հարյուրերորդական) աշխօր: Կամ թե՝ 30 գլուխ հորթը օրական միջին հաշվով 18 կիլոգրամ կենդանի քաշի աճում է ունենում, կոլխոզնիկի վրա հաշվում են մեկ ամբողջ 30 հարյուրերորդական (1,30) աշխօր:

6. Յեթե կոլտնտեսությունն ունի վոչ պակաս 5 ցուլ, դրանց պահելու համար նշանակվում է հատուկ մեկ մարդ, իսկ յեթե ցուլերի թիվը քիչ է, նրանց պահպանությունը հանձնվում է անասնապահներից մեկին:

Ցուլեր պահելու համար աշխօրերի թիվը վորոշում է կոլտնտեսության վարչությունը, կաթնատու անասունների պահվածքի համար սահմանված չափից վոչ պակաս:

7. Կաթնատու անասունների վերաբերյալ արտադրական առաջադրանք վորոշելիս և խնամելու համար նրանց առանձին կոլտնտեսականների ամ-

թացնելիս անհրաժեշտ է նախատեսել, որ կծնեն կովերի 95 տոկոսից ոչ պակաս: Այդ թվից ավելի ստացված ամեն մեկ հորթի համար հաշվում են՝ նախրապահին 2 աշխոր, անասնապահին 3, ջուլապահին 3: Եթե ստացվում է տոկոսից պակաս հորթ, համապատասխան չափով պակասեցնում են աշխորերի թիվը:

Արտադրանքի միավորի գործավարձային գնահատումը ձմրան և այլ սեզոնների համար որոշում են նույն ձևով:

8. Կոլխոզների աշխատանքի գնահատումը կապելով արտադրանքի ելույթի հետ, ֆերմաների վարիչները գյուղատնտեսական անձնակազմի, կաթնատնտեսության մեջ փորձված աշխատանքների և իրենց անձնական փորձի օգնությամբ մեծ ուշադրությամբ և զգուշությամբ պետք է մշակեն անասունների յուրաքանչյուր խմբի համար արտադրանքի ելույթի վերաբերյալ առաջադրանքի նորմաները և այդ առաջադրանքի գնահատումը աշխորերով. պետք է նաև քննեն այդ նորմաները բրիգադների արտադրական խորհրդակցություններում և ընդհանուր ժողովներում: Յուրաքանչյուր կոլտնտեսականի հայտնի պետք է լինի նրան տրված արտադրական առաջադրանքը և արտադրանքի միավորի գնահատումը աշխորերով:



9. Յուրաքանչյուր կոլտնտեսական արտադրական առաջադրանք ստանալիս պետք է իմանա անասուններին տրվելիք կերերի քանակը և նրանց գործադրման նորման: Պարտադիր կերպով անասուններին պետք է կերակրել այն նորմաներով, որոնք սահմանված են արտադրական առաջադրանքի մեջ:

Կոլտնտեսականները պետք է ձգտեն ստանալ որքան հնարավոր է շատ արտադրանք, միաժամանակ խիստ տնտեսեն կերերը: Կոլխոզների վարչությունները պարտավոր են կերերի խնայողության համար սահմանել հատուկ պարգև և որոշել պարգևատրման չափն ու կարգը:

## ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

1. Յուրաքանչյուր կոլտնտեսական, որ աշխատում է ԿԱՖ-ում, ստանում է աշխատանքի գրքույկ, որի մեջ գրանցում են նրա կատարած աշխատանքի համար հաշված աշխորերը:

2. Աշխորերի գրանցումը աշխդրքույկներում խոշոր ԿԱՖ-ում կատարում է բրիգադիրը, մանր ԿԱՖ-ում ֆերմայի վարիչը:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխորերը հաշվելիս բրիգադիրը պետք է հաշվի առնի ստացված արտադրանքի որակը և քանակը, նաև ար-

տադրական առաջադրանքների իրագործման չափը։

3. Սահմանել, որպես կանոն, որպեսզի աշխորերի գրանցումը աշխգրքույկներում կատարվի ոչ ուշ, քան 15 օրը մեկ անգամ, իսկ ստացված կաթի քանակը հաշվի առնվի ամեն օր։

4. Կաթնատու կովերին սպասարկող յուրաքանչյուր կթողին, անասնապահին և նախրապահին հասանելիք աշխորերի քանակը որոշում են նրանց պահպանությանը հանձնված կովերից ստացված կաթի քանակով (ցենտներ) և արտադրանքի միավորի համար սահմանված գործավարձային գնահատումով։

5. Հորթերին կամ բտվող անասուններին խնամող կոլտնտեսականներին հասանելիք աշխորերը որոշում են այդ անասունների կենդանի քաշի աճումով՝ յուրաքանչյուր 15 օրը մեկ անգամ և կենդանի քաշի մեկ միավորի (ցենտներ) համար սահմանված գնահատումով։ Անասուններին կշռում են ոչ ուշ քան 5 օրը մեկ անգամ։

6. Խոշոր ԿԱՖ-ում բրիգադի (ավագ անասնապահը կամ ավագ կթողը), իսկ մանր ԿԱՖ-ում ֆերմայի վարիչը պատասխանատու յե ամեն մի կոլտնտեսականի և ամբողջ բրիգադի աշխատանքի ճիշտ հաշվառման և նրանց աշխորերը իր



ժամանակին աշխգրքույկներում գրանցելու համար։

Հաշվառման կանոնները խախտելու և աշխորերի գրանցման մեջ ղեղծումներ կատարելու համար կոլխոզի վարչությունը հանցավորին պատասխանատվության յե կանչում։

## ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

1. Արտադրական առաջադրանքը գերակատարելու և աշխատանքի լավ որակի համար յուրաքանչյուր կոլտնտեսականի տրվում է պարգև, ավելացնելով աշխորերի թիվը՝ ընդունված նորմայից։ Բացի դրանից, տրվում է միանվագ պարգև 3 տոկոսային պարգևատրման ֆոնդից։

Պարգևը տրվում է հետևյալ հիմնական ցուցանիշների համար։

ա) Անասունների կերը տնտեսելու համար։

բ) Սատկած հորթերի տոկոսի նվազեցման համար։

գ) Ստերջ կովերի տոկոսի նվազեցման համար։

դ) Մատղաշներին իր ժամանակին նորմալ քաշին հասցնելու համար։

ե) Անասնապահության մեջ բարելավումներ ու գյուտեր անելու համար։

զ) Արտադրանքի ավելի լավ որակի համար։

է) Հարևան ԿԱՖ-ում աշխատանքը բարելա-

վելու համար, իր ֆերմայի աշխատանքի օրինակելի փորձը այնտեղ փոխադրելու միջոցով։

Պարգևատրումը կատարել փողով, արդյունաբերական ապրանքներով կամ պարգևատրվող կոլխոզնիկներին անասնապահության դասընթացները գործուղելով և այլն։

Այն կոլտնտեսականները, որոնք խանգարում են աշխատանքի դիսցիպլինան, չեն կատարում ներքին կարգ ու կանոնները և ցածրացնում են աշխատանքի ու արտադրանքի որակը, ենթարկվում են տույժի, որը որոշում է ֆերմայի վարիչը։

## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յուրաքանչյուր կոլխոզում, որտեղ կա ԿԱՖ-, կազմակերպվում են արտադրական խորհրդակցություններ—բրիգադային և ընդհանուր։

2. Բրիգադի արտադրական խորհրդակցությունները կազմակերպում է բրիգադիրը կամ ֆերմայի վարիչը։

3. Արտադրական խորհրդակցություններին պետք է մասնակցեն ԿԱՖ-ում աշխատող բոլոր կոլտնտեսականներն ու մասնագետները։

4. Արտադրական խորհրդակցություններում պարտադիր կերպով քննության ենթակա են հետևյալ խնդիրները։

ա) Անասնապահության արտադրական-ֆի-



նանսական պլանը։

բ) Որացուցային ծրագրերը և արտադրական առաջադրանքները՝ ըստ սեզոնների, ինչպես առանձին բրիգադների, նույնպես և ամբողջ ԿԱՖ-ի մասշտաբով։

գ) Գործավարձի կազմակերպումը, արտադրանքի և աշխատանքների գնահատումը աշխօրերով։

դ) Սոցմրցման ու հարվածայնության պայմանագրերը և պարգևատրումը։

ե) Աշխատանքի դիսցիպլինան։

զ) Աշխատանքի հաշվառումը։

է) Ներքին կարգ ու կանոնը։

ը) Կերի բազայի կազմակերպումը։

թ) Կերակրման նորմաները։

ժ) Պայքար կորուստների դեմ։

ժա) Արտադրական առաջադրանքների իրագործման ընթացքը։

ժբ) Զոոտեխնիկական ձեռնարկումները։

Արտադրական խորհրդակցության որոշումները հաստատում է ֆերմայի վարիչը։

1007
33649

## ՍՈՑՄՐՑՄԱՆ ԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Կոլտնտեսություններում կաթնապրանքային ֆերմայի կազմակերպման հիմնական պայմանը հանդիսանում է աշխատանքի սոցիալիստական ձևերը—սոցմրցման և հարվածայնության՝ լայն կիրառումը։

Այդ բանին պետք է մասնակից անել կոլխոզի լայն մասսաներին, բարձրացնել նրանց ակտիվությունը, աշխատանքի վոգևորությունը և նախաձեռնությունը:

2. Սոցիալիստական մրցումը պետք է տարածել ապրանքային ֆերմաների, բրիգադների, աշխատավորական խմբակների և առանձին կոլտնտեսականների միջև: Որինակելի ֆերմաների և կոլտնտեսականների նվաճումները սոցմրցման միջոցով պետք է դարձնել ուրիշ ֆերմաների և կոլխոզային մասսաների սեփականությունը:

3. Սոցմրցման ցուցանիշները, պայմանագրերը և նրանց իրագործման ընթացքը պարտադիր կերպով քննության յեն յենթարկվում արտադրական խորհրդակցություններում, վորոնց մասնակցում է կոլխոզնիկների մասսան:

Կոլխոզների վարչությունները և ֆերմաների վարիչները պետք է առաջ քաշեն լավ հարվածային կոլտնտեսականներին, սոցիալիստական ձևերի կազմակերպիչներին, դարձնելով նրանց ավագ անասնապահ, ֆերմայի վարիչ, Կաթկոլտնտկենտրոնի հրահանգիչ և այլն:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈԼՏՆՏԿԵՆՏՐՈՆ՝
Տ. ՅՈՒՐԿԻՆ

ՀԱՄԱՄԻՈՒԹԹԵՆԱԿԱՆ ԿԱԹԿՈԼՏՆՏԿԵՆՏՐՈՆ՝
Ի. ԲՈՅԱՐ



## ՀԱՏՈՒԿ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍՏՈՐԻՆ ՑԱՆՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Շրջկոլտնտմիությունների իրավունքներն ու պարտավորությունները կոլտնտեսությունների հատուկ ապրանքային ֆերմաների վերաբերմամբ:

Ապրանքային ֆերմաների վերաբերմամբ շրջկոլտնտմիությունների վրա դրվում են հետևյալ պարտականությունները.

1. Հետևել, վորպեսզի ապրանքային ֆերմաները լինեն իրոք ապրանքային, վորի համար շրջկոլտնտմիությունը իր վրա յե կրում կոլտնտեսությունների կողմից ապրանքային արտադրանքը հանձնելու պայմանագրերը լրիվին և իր ժամանակին կատարելու անմիջական պարտականությունը:

2. Նշել ապրանքային ֆերմաների շինարարության կետերը և կոլտնտեսությանը նախապատրաստել այդ շինարարության համար:

3. Հատուկ կենտրոնների ապարատների հետ միասին՝ կոլտնտեսություններում անցկացնել պայմանագրերի կնքման կամպանիա:

4. Ապրանքային ֆերմաների շինարարության գործում տեղական նյութերով անմիջական օգնություն ցույց տալ կոլտնտեսություններին: Ամեն կերպ աջակցել, վոր տեղական արդյունքներից կոլ-

տնտեսություններին շինարարական նյութեր մատակարարվեն:

5. Ամեն կերպ աջակցել կոլտնտեսություններին ապրանքային ֆերմաներին անհրաժեշտ քանակի անասուններ մատակարարելու գործում. օժանդակել, որ հանրայնացված անասունները կամավոր համաձայնության հիմունքներով կենտրոնացվեն ապրանքային ֆերմաներում:

6. Մտցնել կոլտնտեսական ֆերմաներում աշխատանքի կազմակերպման լավ ձևեր: Հետևել, որ ապրանքային ֆերմաները իրականացնեն հատուկ կենտրոնների ցուցումները՝ արտադրության լավագույն կազմակերպման և ֆերմաների ապրանքայնությունը բարձրացնելու գործում: Աջակցել ֆերմաների արտադրության մեքենայացմանը և աշխատանքի բնագավառում գործավարձի ու պարգևավարման սիստեմի կիրառմանը և այլն:

7. Շրջկոլտնտեսությունը պատասխանատու է ֆերմաների շինարարության նպատակով կոլտնտեսություններին բաց թողնված վարկերի և շինարարական նյութերի ճիշտ օգտագործման համար:

8. Շրջկոլտնտեսությունները պարտավոր են մշտապես ստուգել և հետևել, որ կոլտնտեսությունները կատարեն ապրանքային ֆերմաների



վերաբերյալ հատուկ կենտրոնների հետ կնքած բոլոր պայմանագրերը:

ա) Շրջկոլտնտմիությունը սիստեմատիկ կերպով ստուգում է կոլտնտեսությունների գործունեությունը՝ հատուկ կենտրոնների հետ կնքած պայմանագրերի կատարման ասպարեզում:

բ) Ստուգում է աշխատանքի դրվածքը ֆերմայում:

գ) Ստուգում է նախրի կազմավորման համար տարվող աշխատանքները:

դ) Կազմակերպում է ֆերմաները կերով լրիվ ապահովելու գործը:

ե) Լիակատար կերպով ապահովում է ֆերմայի արտադրությունը բանվորական ուժով:

զ) Հետևում է աշխատանքի ճիշտ կազմակերպմանը՝ գործավարձի և պարգևավարման հիմունքներով:

է) Հետևում է, որպեսզի ապրանքային ֆերմաներում ճիշտ հիմունքների վրա դրվի աշխատանքի յեկամուտների հաշվառումը:

ը) Օգնում է կոլտնտեսություններին տեղական աղբյուրներից շինարարական նյութեր ձեռք բերելու գործում:

Ֆերմաների աշխատանքների ստուգումը կազմակերպում է հրահանգչական հետազոտություն-

ների ձևով, կատարելով այդ հատկապես հրահանգիչ-կոլտնտեսականների միջոցով, Շրջկոլտնտմիություններում կոլտնտեսությունների վարչությունների զեկուցումները լսելով և այլ մեթոդներով։

Շրջկոլտնտմիությունները պարտավոր են ըստուգման արդյունքների մասին իսկույն տեղեկացնել հատուկ կենտրոնների լիազորներին։

9. Շրջկոլտնտմիությունները պարտավոր են միջոցներ ձեռք առնել, վորպեսզի կոլտնտեսությունները ֆերմաների վարիչ նշանակեն լավագույն կոլտնտեսականներից, վորոնք իրոք կարող են ղեկավարել այդ ֆերմաները։

Շրջկոլտնտմիությունները՝ կոլտնտեսության կողմից ֆերմայի վարիչի պաշտոնի համար առաջադրված թեկնածուի վերաբերյալ իրենց յեզրակացությունը տալիս են համապատասխան կենտրոնի լիազորին։

## II

## ՀԱՏՈՒԿ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Ապրանքային ֆերմաների վերաբերմամբ հատուկ կենտրոնների տեսուչների վրա դրվում են հետևյալ պարտականությունները։



1. Հատուկ կենտրոնի տեսուչը ամբողջովին պատասխանատու յե յուր գործունեության շըրջանում գտնվող ապրանքային ֆերմաների արտադրության դրվածքի և այդ ֆերմաների կողմից իրենց ամբողջ ապրանքային արտադրանքը համապատասխան օրգաններին ժամանակին հանձնելու համար։

2. Տեսուչը շրջկոլտնտեսության հետ միասին պետք է կազմի յուր շրջանի ֆերմայի և սերմնաբուծական կոլտնտեսությունների արտադրական և բանվորական պլանները, ինչպես նաև պետք է ստուգի այդ պլանների կատարումը և տա յուր յեզրակացությունը յերկրային լիազորներին։

3. Ամենորյա ոժանդակություն պետք է ցույց տա ֆերմաներին՝ արտադրության և աշխատանքի կազմակերպման գործում (գործավարձի կիրառումը, հաշվառումը, անասունների ճիշտ կերակրումը, անասուններին խնամելը, ֆերմաները կերով ապահովելը)։

4. Պետք է ոգնի կոլտնտեսություններին՝ ապրանքային ֆերմաների համար շինություններ մատակարարելու և սարքավորում ձեռք բերելու գործում, պետք է մատակարարի արդյունավետ անասուններ, ընտիր տեսակի սերմեր, զանազան արտադրական միջոցներ, պետք է նպաստի կոլտնտեսականների ապրանքային արդյունավետ անասունների հայթայթմանը։

5. Ամեն օր խիստ պետք է հսկել, որպեսզի կոլտնտեսությունները հանձնեն իրենց ողջ ապրանքային արտադրանքը։

6. Տեսուչը շրջկոլտնտմիության հետ միասին ֆերմաները պետք է կցի այն ձեռնարկություններին, որոնք վերամշակում են ֆերմայի արտադրանքը, պետք է կազմակերպի տարայի և ամանեղենների մատակարարումը, պետք է ապահովի տրանսպորտի կազմակերպումը, պետք է հետևել թե վերամշակող գործարանները ինչպես են ընդունում ֆերմայի արտադրանքը, պետք է ձեռք առնի բոլոր անհրաժեշտ միջոցները վերացնելու ապրանքային արտադրանքի ռեալիզացիայի գործում առաջացած ձեղքվածքները, դնելով այս բոլոր խնդիրները կենտրոնի լիազորի և անմիջականորեն իրեն՝ կենտրոնի առաջ։

7. Երբ որևէ կոլտնտեսություն չի կատարում ապրանքային արտադրանքը հանձնելու և ֆերմայի արտադրությունը կազմակերպելու պարտավորությունները, ապա այդ դեպքում տեսուչը շրջկոլտնտմիության հետ միասին ձեռք են առնում բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նրա վրա ազդելու համար, այն է՝ առաջարկում են բանկին, որ նրան վարկ բաց չթողնի, դադարեցնում են շինարարական և այլ նյութերի մատակարարումը, հարց են հարուցում՝ վարկերը ժամկետից առաջ



գանձելու և գնման կարգով մատակարարված անասունները հետ վերցնելու մասին, դադարեցնում են կերեր բաց թողնելը և հարց են բարձրացնում կենտրոնի առաջ լուծելու կոլտնտեսության հետ կապված պայմանագրերը։

Տեսուչը պարտավոր է ձեռք առնել բոլոր միջոցները, որպեսզի այդ խնդիրը լուծվի շրջանում։ Տեսուչները պետք է աշխատեն, որ շրջկոլտնտմիությունները մասնակցեն իրենց աշխատանքներին։ Նրանք վարկերը փակելու իրավունք ունեն միայն շրջկոլտնտմիության հետ միասին։ Դադարեցնում են կերեր բաց թողնելը։ Ի.Տ.Ա. դիրեկտորները կազմակերպում են դասընթացներ՝ կոլտնտեսականներից մասսայական կադրեր պատրաստելու համար։

8. Տեսուչը պատասխանատու է ֆերմայի սանիտարական դրության, կերակրման ճիշտ ռեժիմի, աշխատանքի և հաշվառման ճիշտ կազմակերպման համար. Նա պատասխանատու է նաև ֆերմայի այն ամենօրյա զոոտեխնիկական և ագրոտեխնիկական սպասարկման համար, որը պետք է կատարի յուր գործունեության շրջանում աշխատող ագրո-զոոտեխնիկական պերսոնալը։

9. Տեսուչները կազմակերպում են փորձերի փոխանակություն ֆերմաների միջև՝ փոխադարձ հետազոտության, հարեվան ֆերմաներում գործի

դրվածքի ուսումնասիրության միջոցով, առաջավոր ֆերմաների փորձը լուսաբանում են տեղական մամուլում, շրջկոլտնտեսությունների հետ միասին կազմակերպում են հատուկ ցուցահանդեսներ, էքսկուրսիաներ և այլն:

10. Տեսուչը պատասխանատու յե յերկրային, մարզային լիազորի առաջ և պարբերաբար տեղեկացնում ե նրան ֆերմաների արտադրության դրվածքի և ապրանքային արտադրանքը հանձնելու ընթացքի մասին:

Շրջանային տեսուչները պահվում են ամբողջապես ի հաշիվ հատուկ կենտրոնների լիազորների և միաժամանակ ամբողջությամբ գտնվում են նրանց տրամադրության տակ:

Նկատի ունենալով, վոր տեսուչների և շրջկոլտնտմիությունների նպատակը ապրանքային ֆերմաների բարձրացումն ե, այդ պատճառով տեսուչները շրջկոլտնտմիությունների հետ աշխատում են միանգամայն կոնտակտ և իրականացնում են ապրանքային ֆերմաների շինարարության միասնական ծրագիրը:

## III

## ՏԵՍՉԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Ֆերմաների ամենորյա արտադրական ղեկավարման և տեխնիկական գործը լավագույն կերպով



կազմակերպելու համար տեսչական ապարատը կազմակերպվում ե հետևյալ հիմունքներով՝

ա) «Մոլոկոցենտրի» գծով յուրաքանչյուր 10–15 ֆերմային՝ 2000-ից վոչ պակաս կթու կով ունենալու դեպքում— 1 տեսուչ.

բ) «Սվինովոդի» գծով՝ նույնպես, այն պայմանով, վոր մայր խոզերի թիվը լինի վոչ պակաս 300-ից և հանձնվելիք խոզերի թիվը վոչ պակաս 1500 գլխից (1931 թվի համար).

գ) «Ովոշչեուգորոգոցենտրի» գծով՝ յուրաքանչյուր 15–20 ֆերմային, վոչ պակաս, քան 3777 հեկտ. հողամասով—1 տեսուչ.

դ) «Սեմենավոդցենտրի» գծով՝ յուրաքանչյուր սերմաբուծական կոլտնտեսությանը— 1 տեսուչ-ագրոնոմ:

Հատուկ կենտրոնները այս նորմաները կոնկրետացնում, դիֆերենցիացիայի յեն յենթարկում ըստ յերկրների, մարզերի և շրջանների:

«Ինկուբատորպտիցեցենտրի» գծով՝ շրջանային տեսուչների փոխարեն յուրաքանչյուր ինկուբատորոթռչնաբուծական կայանի համար նշանակվում ե դիրեկտոր, վորը յուր աշխատանքը տանում ե նույնպես սույն կանոնադրության հիման վրա:

Ի.Թ.Կ. դիրեկտորը, վոր սպասարկում ե մի քանի վարչական շրջաններ, մտնում ե այս շրջկոլտնտմիության վարչության մեջ, վորի տերիտո-

րեայի վրա գտնվում է ինկուբատոր-թռչնաբուծ կայանը:

ԻԹԿ դիրեկտորը կոլտնտեսական թռչնաբուծական ֆերմաների արտադրական ղեկավարությունը և նրանց ապրանքայնությունը զարգացնելու և շահաբերությունը բարձրացնելու աշխատանքները տանում է թե ինքն անմիջականորեն և թե ինկուբատորա-թռչնաբուծական կայանի հատուկ զոոտեխնիկական, անասնաբուժական և հրահանգչական ապարատի միջոցով:

Այդ ապարատը պետք է կցված լինի համապատասխան քանակությամբ կոլտնտեսային թռչնաբուծական կայանների, ընդգրկում ԻԹԿ գործունեության շրջանում աշխատող բոլոր մասնագետ թռչնաբուծները հանձնվում են ԻԹԿ-ի ապարատին:

3. Որպես կանոն, տեսչական ապարատ կազմակերպվում է բոլոր վարչական շրջաններում, որտեղ կա բավարար քաղա աշխատանքի համար (վերևում բերված նորմաների համաձայն):

Տեսուչների կենտրոնը, որտեղ նրանք մնում են, որպես կանոն, հանդիսանում է շրջանային կենտրոնը, և դա հատկապես այն ժամանակ, երբ շրջանային կենտրոնում են համախմբված վերամշակման ձեռնարկությունները և ՄՏԿ: Թույլատրելի չե տեսուչների համար կենտրոն ընտրել



վերամշակման ձեռնարկությունները և ՄՏԿ (նրանք շրջանային կենտրոնում չեն տեղավորված), յեթե նրանք սպասարկում են ապրանքային ֆերմաների հիմնական մասսան և հեռու յեն գտնվում շրջանային կենտրոնից:

Այն շրջաններում, որտեղ ապրանքային ֆերմաներ ունեցող կոլտնտեսությունների հիմնական մասսան սպասարկվում է ՄՏԿ-ի կողմից, այդ դեպքում հատուկ կենտրոնները կարող են շրջանային տեսչության չկազմակերպել, այլ նրանց պարտականությունները դնել ՄՏԿ դիրեկտորների վրա, նրանց հետ (ՄՏԿ) կնքած պայմանագրերի համաձայն. Նման դեպքում հատուկ կենտրոնները ՄՏԿ-ն ապահովում են զոոտեխնիկական և ագրոտեխնիկական համապատասխան պերսոնալով՝ ապրանքային ֆերմաներն սպասարկելու համար:

4. Տեսուչները հանդիսանում են շրջկոլտնտմիության վարչության անդամները և հաստատվում են նրանց կազմի մեջ:

5. Անասնապահական ֆերմաների ամենօրյա զոոտեխնիկական, իսկ բանջարանոցային ֆերմաների ու սերմնաբուծական կոլտնտեսությունների անտեսությունները կազմակերպվում են հատուկ ագրոտեխնիկական սպասարկման համար կոլտըն-

տեսությունները կազմակերպում են հատուկ ագրոտեխնիկական և զոոտեխնիկական ապարատ՝ հատուկ կենտրոնների նյութական ոժանդակությամբ: Այդ ապարատը կազմակերպվում է ագրոնոմիական շրջանների սիստեմով, ագրոնոմների և զոոտեխնիկների կենտրոնն ընտրելով ամենախոշոր ֆերմաները: Այդ շրջանները լինելու յեն այնպիսի մեծության, վորպեսզի հնարավոր լինի ռացիոնալ կերպով իրականացնել կոլտնտեսային ֆերմաներին սիստեմատիկ ոգնություն ցույց տալու գործը:

6. Հատուկ կենտրոններին թույլատրվում է՝ միջշրջանային նշանակություն ունեցող վերամշակող ձեռնարկություններ ունենալու դեպքում, բացի շրջանային տեսչությունից, ունենալ նաև նրանց կից տեսչություններ (միջշրջանային տեսչություն), յենթարկելով նրանց աշխատանքը շրջանային տեսչությանը:



ՀՀ Ազգային գրադարան
NL0204304